ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

idcarmenia@gmail.com2

https://idcarmenia.am/

28.02.2024

ԿԱՐԾԻՔ

Գևորգ Սիմոնյանն ընդդեմ «Փաստինֆո» ՍՊԸ-ի վերաբերյալ

Փաստերը

2023 թ. մարտի 10-ին ժամը 15:05-ին pastinfo.am լրատվական կայքում հրապարակվել է *«ԱԱԾ ն այս պահին խուզարկում է փոխքաղաքապետի աշխատասենյակը»* հոդվածը, որում նշվել է, որ խուզարկության լուրը հաստատվել է Երևանի քաղաքապետարանից՝ ի պատասխան լրատվամիջոցի հարցմանը:

Նույն օրը, ժամը 17:37-ին խմբագրությունը հրապարակել է ևս մի հոդված՝ «Իրավապահները պահանջում են կալանավորել Երեւանի քաղաքապետի տեղակալ Գեւորգ Սիմոնյանին», ըստ որի՝ Գևորգ Սիմոնյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն է ներկայացվել դատարան, և որ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվում է նաև Թոքաբանության ազգային կենտրոնի փոխտնօրենին կալանավորելու հարցը: Լրատվամիջոցը նաև հիշեցրել է, որ դեռ հունվար ամսին հրապարակել էր տեղեկություն այն մասին, որ Հակակոռուպցիոն կոմիտեից հաստատել էին, որ նախաձեռնվել են մի քանի վարույթներ պաշտոնական լիազորությունների չարաշահման, առանձնապես խոշոր չափերով գումարներ վատնելու կամ յուրացնելու և փաստաթղթեր կեղծելու առերևույթ հանցագործությունների դեպքերի առթիվ:

2023 թվականի մարտի 11-ին կայքը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել այդ թեման և հրապարակել է «Գևորգ Սիմոնյանի աշխատասենյակի խուզարկությամբ հետաքրքիր փաստաթղթեր են հայտնաբերվել. Տիգրան Ավինյանի վիճակը լրջանում է» հոդվածը, որում նշել է, որ, ըստ լրատվամիջոցին մոտ կանգնած աղբյուրների, այդ փաստաթղթերը պոլիկլինիկաների և շտապօգնության աշխատակիցների ցուցակներ են Երևանի ավագանու ընտրություններում նրանց ներգրավելու վերաբերյալ: Հրապարակման համաձայն՝ *«արդեն ցուցակագրել են այն գլխավոր բժիշկներին, ու ընդհանրապես այն*

բժիշկներին, որոնք պատրաստակամություն են հայտնել աշխատել ընտրություններում Ավինյանի համար»։

Նույն օրը լրատվամիջոցն իր Յութուբյան էջում հրապարակել է *«Կտրուկ զարգացումներ Ավինյանի ու Թորոսյանի շուրջ»* վերնագրով մոտ 2 րոպեանոց տեսանյութ, որում ոչ միայն ներկայացվել են Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական գործի մասին փաստեր, այլև տեղ են գտել նախորդ օրը կատարված խուզարկության և ընտրությունների հետ կապված ցուցակների հայտնաբերման մասին դիտարկումներ։

2023 թ. մարտի 12-ին լրատվամիջոցի ներկայացուցիչն իր նախաձեռնությամբ կապ է հաստատել Գևորգ Սիմոնյանի փաստաբանի հետ ու նրան հարցեր ուղղել փոխքաղաքապետի կալանավորման վերաբերյալ։ Սրա մասին լրատվամիջոցը հրապարակել է իր հաջորդ լրատվական նյութը։ Դրանում, մասնավորապես, նշվել է, որ Գևորգ Սիմոնյանը մեղադրվում էր առողջապահության փոխնախարար աշխատած ժամանակահատվածում (2020-2022 թթ.) իր ծառայողական պարտականությունները չկատարելու մեջ, ինչն էական վնաս է պատճառել պետության օրինական շահերին, ինչպես նաև՝ որ փաստաբանը պատրաստվում էր բողոքարկել կալանավորման որոշումը։

2023 թ. մարտի 13-ին pastinfo.am-ն հրապարակել է «Որեւէ հետաքրքիր նյութ չի հայտնաբերվել. Սիմոնյանի փաստաբանը հերքել է» հոդվածը, որում նշել է, որ Երեւանի փոխքաղաքապետ Գևորգ Սիմոնյանի փաստաբանը հերքել է, որ նրա աշխատասենյակում կատարված խուզարկությամբ խնդրահարույց փաստաթղթեր են հայտնաբերվել։

2023 թ. մարտի 24-ին լրատվամիջոցը կրկին կապ է հաստատել Գևորգ Սիմոնյանի փաստաբանի հետ և քրեական գործի քննությանը վերաբերող նրա պատասխանների ներկայացմամբ հերթական նյութն է հրապարակել։

2023 թ. ապրիլի 13-ին Գևորգ Սիմոնյանը հայցադիմում է ներկայացրել Երևանի քաղաքացիական դատարան ընդդեմ «Փաստինֆո» ՍՊԸ-ի՝ խնդրելով պարտավորեցնել ընկերությանը հերքել պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող տեղեկությունները և բռնագանձել նրանից 6 միլիոն դրամի փոխհատուցում։ Հայցվորը նշել է, որ 2023թ. մարտի 11-ին հրապարակված *«Գևորգ Սիմոնյանի աշխատասենյակի խուզարկությամբ հետաքրքիր փաստաթղթեր են հայտնաբերվել. Տիգրան Ավինյանի վիճակը լրջանում է»* հոդվածում և «Յութուբ» սոցիալական ցանցում հրապարակված տեսանյութում տեղ գտած հրապարակային հայտարարությունները զրպարտող են, քանի որ դրանք իրենց բնույթով արատավորող, իրականության չհամապատասխանող տեղեկություններ են։

Դատաքննության նախնական փուլում լրատվամիջոցը ներկայացրել է առարկություններ և պնդել, որ հրապարակումների իրավաչափության հարցը

անհրաժեշտ է դիտարկել Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի «ողջամիտ հրապարակում» իրավական պաշտպանության ներքո՝ հաշվի առնելով մի շարք գործոններ։ Դրանք են՝ նյութի հանրային նշանակությունը, թեմայի հրատապությունը, հրապարակումը հավասարակշռված եղանակով ներկայացնելը, ինչպես նաև այն, որ խմբագրությունը շարունակաբար ուսումնասիրել է վիճահարույց իրադարձությունների ողջ համատեքստը, օրինակ, այն հանգամանքը, որ բազմաթիվ հրապարակումների համաձայն՝ Գևորգ Սիմոնյանը ակտիվորեն ներգրավված է եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուի նախընտրական քարոզարշավին։ Ի մի բերելով իր փաստարկները՝ պատասխանողը, հիմնվելով Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի վրա, պնդել է, որ խնդրո առարկա հրապարակումները պայմանավորված էին գերակա հանրային շահով, և որ փաստացի տվյալները ներկայացվել են դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը պարզելու համար ողջամտության սահմաններում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելով, հավասարակշռված կերպով ու բարեխղճորեն։

Դատաքննության նախնական փուլն ընթացքի մեջ է։ Առաջիկա դատական նիստը նշանակված է 2024 թվականի մայիսի 8-ին։

Եզրահանգում

Խորհուրդը գտնում է, որ նախնառաջ անհրաժեշտ է պարզել, թե արդյոք լրատվամիջոցի գործողությունները համապատասխանել են վերը նշված իրավական պաշտպանության տարրերին, որոնք հավաքական կերպով ամփոփված են Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում։
Հրապարակված իր նախկին կարծիքներում[1] ՏՎԽ-ն անդրադարձել է այդ խնդրի կարգավորմանը, որը միջազգային իրավունքում և այլ երկրների իրավական համակարգերում հայտնի է նաև «բարեխիղճ հրապարակում» (fair comment), «ողջամիտ հրապարակում» (reasonable publication) և այլ եզրույթներով։ Այս հասկացությունները կարևոր նշանակություն ունեն և կոչված են պաշտպանել լրագրողական ազատությունը նույնիսկ այնպիսի վիճահարույց հանգամանքում, երբ հրապարակած տեղեկությունը չի համապատասխանել իրականությանը։ Թեև դա կարող է առաջացնել հակասական կարծիքներ, այդուհանդերձ, ողջամտության և բարեխղճության սկզբունքի կիրառմամբ արտահայտման ազատության պաշտպանությունը անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում։

Նշվածը չի նշանակում, իհարկե, որ լրագրողները կարող են այդ սկզբունքի պաշտպանությունից օգտվել անվերապահորեն։ Նման հանգամանքում պետք է հաշվի առնել, մի կողմից, զրպարտության ենթարկված անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի իրավունքը, մյուս կողմից՝

տեղեկություններ ու գաղափարներ ստանալու և տարածելու իրավունքը։ Այսպիսի վեճերում, նույնիսկ եթե փաստացի հայտարարության ճշմարտացիությունը չի հաստատվել, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, թե արդյո՞ք դրսևորվել է լրագրողական բարեխղճություն, և արդյո՞ք հնարավոր պատասխանատվության միջոցը համաչափ է այն նպատակին, որի համար կիրառվում է այդ միջոցը։

Հաշվի առնելով վերը նշվածը, Խորհուրդը գտնում է, որ խնդրո առարկա նյութի բովանդակությունը, անկասկած, պայմանավորված էր հանրային շահով։ Տվյալ ժամանակահատվածում Երևանի ավագանու ընտրություններում ենթադրյալ խախտումների վերաբերյալ եղել են բազմաթիվ հրապարակումներ, հաղորդումներ, հնչել են կարծիքներ, գնահատականներ։ Իշխանության ներկայացուցիչներն էլ, իրենց հերթին, հրապարակային հայտարարություններում խոսել են ընտրախախտումների դեմ պայքար մղելու իրենց կամքի մասին։ Այդ ամենի լույսի ներքո լրատվամիջոցի ընտրած թեման և բուն նյութն ուներ հանրային նշանակություն և ընտրությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու հանրային իրավունքի իրականացման կարևոր գործիք էր։

Հաջորդ հարցն այն է, թե արդյո՞ք վիճահարույց նյութերը ներկայացվել են հավասարակշռված։ Այս առումով Խորհուրդը գտնում է, որ խնդրո առարկա երկու լրատվական նյութերը պետք է դիտարկել լրատվամիջոցի հետագա՝ մարտի 12-ի, 13-ի և մարտի 24-ի հրապարակումների համատեքստում։ Մասնավորապես, լրատվամիջոցը կապ է հաստատել Գևորգ Սիմոնյանի փաստաբանի հետ, հրապարակել է նրա նկատառումները քրեական հետապնդման մասին, որոնցից կարելի է բխեցնել, որ խուզարկությունները կատարվել են հարուցված քրեական գործի շրջանակներում, և որ դրանք կապ չեն ունեցել ընտրությունների հետ։ Բացի այդ, ապրիլի 13-ի նյութում լրատվամիջոցը մեջբերել է փաստաբանի ասածը, որով նա հերքել է ցուցակների վերաբերյալ լուրերը։ Ընդ որում՝ փաստաբանի խոսքերը խմբագրությունը ներկայացրել է հրապարակման վերնագրում։ Բացի այդ, **իր բովանդակությամբ ու հետևանքով ապրիլի 13-ի նյութը կարելի է համարել ապրիլի 11-ի երկու վիճահարույց հրապարակումներով տարածված լուրերի հերքում և դրանց վերաբերյալ պատասխանի տարածում։** Այդ առումով կարելի է եզրահանգել, որ խմբագրությունը ձեռնարկել է բավարար միջոցներ հրապարակումների թիրախ հանդիսացած անձին հերքման և պատասխանի հնարավորություն տրամադրելու համար։ Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ լրատվամիջոցը որպես առցանց հարթակ, ինչպես նաև Յութուբ սոցիալական ցանցը, որտեղ տարածվել են վիճահարույց նյութերը, հնարավորություն են տալիս հրապարակել հերքում և/կամ պատասխան, մինչդեռ փաստերը ցույց են տալիս, որ հայցվորը չի օգտվել այդ հնարավորություններից։ Նա չի օգտվել նաև պատասխանի կամ հերքման պահանջով լրատվամիջոցին դիմելու հնարավորությունից, ինչն օրենքով նախատեսված արտադատական իրավական պաշտպանության միջոց է, որն, ի դեպ, խրախուսվում է դատարանների կողմից։ Եվ վերջապես, ուշադրության է արժանի նաև այն, որ խնդրո առարկա պնդումները լրատվամիջոցը կատարել է աղբյուրների

վկայակոչմամբ, որոնց չբացահայտելը լրատվամիջոցի իրավունքն է: Հաշվի առնելով այս ամենը՝ Խորհուրդը գտնում է, որ վիճարկվող հրապարակումներն ընդհանուր առմամբ հավասարակշռված են:

Վերը նշված լույսի ներքո պետք է գնահատել նաև լրատվական նյութի հրատապության հարցը: Արդյո՞ք տվյալ դեպքում հեղինակը պետք է ավելի շատ ժամանակ ու ջանքեր հատկացներ փաստերը ճշգրտելու համար: Այս հարցի առումով լրատվամիջոցները և լրագրողները հաճախ հայտնվում են երկընտրանքի առջև: Մի կողմից, նրանք պարտավոր են հանրային հետաքրքրություն ներկայացնող ու հրատապ իրադարձություններին վերաբերող լուրերը հաղորդել առանց հապաղելու, քանի որ հակառակ դեպքում նյութը կկորցնի իր նշանակությունը: Մյուս կողմից՝ իրական վտանգ կա, որ անհրաժեշտ արագությամբ հրապարակված տեղեկությունը ի վերջո, post factum, կարող է չհամապատասխանել իրականությանը և այդ հանգամանքը հանգեցնի իրավական պատասխանատվության: Դրան կարող է գումարվել նաև աղբյուրների գաղտնիությունը և այն պաշտպանելու լրատվամիջոցի պարտավորությունը: Հաշվի առնելով բոլոր նշված գործոնները, ինչպես նաև նյութերի հանրային նշանակությունը և տվյալ դեպքում պատասխանի հնարավորություն ընձեռելու խմբագրության պատրաստակամությունը, Խորհուրդը գտնում է, որ վիճահարույց հրապարակումների բովանդակությունը պահանջում էր դրանք տարածել հրատապորեն:

Ի մի բերելով վերը նշվածը, Խորհուրդ եզրակացնում է, որ տվյալ իրավիճակում լրատվամիջոցը իրավասու է օգտվել «ողջամիտ հրապարակում» իրավական պաշտպանության հնարավորությունից՝ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի հիմքով, քանի որ խնդրո առարկա հրապարակումներն իրենց բովանդակությամբ պայմանավորված էին գերակա հանրային շահով, և խմբագրությունը ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու փաստական տվյալների ճշմարտությունը և հիմնավորվածությունը, հավասարակշռված ու բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները, ինչպես նաև պատրաստակամ է եղել տրամադրելու հերքման կամ պատասխանի հնարավորություն:

[1] Տե՛ս, օրինակ, ՏՎԽ-93, ՏՎԽ-70, ՏՎԽ-76 փորձագիտական կարծիքները

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Շուշան Դոյդոյան (Խորհրդի քարտուղար) - Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Արա Ղազարյան - «Արա Ղազարյան» իրավաբանական գրասենյակի տնօրեն

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Աշոտ Մելիքյան - Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Օլգա Սաֆարյան - Փաստաբան

Դավիթ Սանդուխչյան – Փաստաբան